Գեղարդա վանքի 1559 (?) թվի մի արձանագրութեան մեջ յերեք իշխանազուններ «Սմբատեցիքս? պարոն Զումէս, պարոն Միրզայ պէկիս, պարոն Բիրթէս» իրենց հայրենական մուլքը այգին, բաղչեն վախմ են տալիս «ի դուռն սբ Գեղարդին»։ Թվականը կասկածելի է, բայց հավանորեն ՌԸ=1559։ Կասկածելի է և «Սմբատեցիքս» ընթերցվածը, կարող է լինել «Տմբատեցիքս»։ Արձանագրությունը գտնվում է ներքևի հարկի արևմտյան վիմափորի (տ. եջ 106. 112 և շար. պատկ. 45) հյուսիսային և արևմտյան վորմասյունների մեջ (պատկ. 108). նույն անունները կրկնվում են արևմտյան պատի վերա փորագրված խաչերի մոտ (պատկ. 109. Հավել. Ա. 35), բայց յերրորդ անունը պարզ «Բուրթէլ» գրված։ Զումայի անունը առիթ է տալիս մտածելու, վոր նա ԺԵ. դարու յերկրորդ կիսում հիշված Զումա Բ.-ի թոռն եր կամ թոռնորդին։

Հայրապետ յեպիսկոպոսի պատվերով Խաղ գրիչը մի Մաշտոց է գրում նորա համար «ի թուականութեան հայոց ՌԹ (=1560) ի երկիրս Արարատեան, ի ձորս Բեղոյ, ի վանքս, որ կոչի Վանըստան, ի դուռն սբ ածածնիս»։ Հիշատակարանի մեջ Հայրապետ յեպիսկոպոսը հայտնում է, վոր Մաշտոցը գրել է տվել յուր հոր «Խէսարի և մոր Գիւզիւդի» հիշատակին, և «եղբարցն իմ պրն Միրաքին, պրն Պռոշին և ամ արեան մերձաւորաց»։ Միաբանների շարքում հիշում է նաև յուր «հայրաքիրն պրն ապաշխարող Արայիշն, որ բազում ժամանակ ծառայեց վանիցս. (Հավել. Բ. 38)։ Հայրապետ յեպիսկոպոսի մասին ևս պարզ հիշատակություն չունինք, թե ծագմամբ Պռոշյան է, բայց հավանական ենք համարում հետևյալ հիմունքներով. նախ Բեղվա ձորը, ինչպես և Վանստանը Պռոշյանց սեպհականություն եր (եջ 65)։ Յրրկրորդ ԺԵ. դարում հաստատուն փաստերով տեսանք, վոր Բեղվա ձորին կից Գեղարդի յեպիսկոպոսությունը տոհմական եր և բոլորն էլ Պռոշյաններից. մենք կտեսնենք, վոր ԺԷ. դարումն էլ մի շարք յեպիսկոպոսներ ունինք նույն տոհմից. պետք է յենթադրել. վոր ԺԶ. դարու յեպիսկոպոսներն էլ նույն տոհմից են։ Վերջապես Հայրապետ յեպիսկոպոսի յեղբայրներից մեկի «պրն Պռոշ» անվանակոչությունը նույն տոհմի ավանդությունն է մատնանշում։ Այս դեպքում պետք է յենթադրել, թե Հայրապետ յեպիսկոպոսի հայր Խեսարը Զում Բ.-ի կամ նորա ժամանակակից իշխաններից մեկի վորդին եր։

Պռոշյանց? արձանագր. Գեղարդում. ԺԶ. դար. Պատկեր 108.